Արձանագրություն N 3
ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18 հոկտեմբերի 2023թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ս. Ասրյանը, Ս. Նազարյանը, Ս. Ալեքսանյանը և Լ. Գալֆայանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար հոսքաչափերի և մակարդակաչափերի ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է 06.10.2023 թվականին: Հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2023 թվականի հոկտեմբերի 16-ին, ժամը 16:30-ին:

Հրավերի վերաբերյալ հարցումները և պարզաբանումները

ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հարցում է ներկայացվել 11.10.2023թ., որի վերաբերյալ 12.10.2023թ. տրվել է պարզաբանում և հրապարակվել է հայտարարություն:

ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	Հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Արտախ» ՍՊԸ	ք. Երևան, Բաղրամյան փող., շ. 62 60 091 242447	lianna.avagyan@mail.ru
«Պարագիծ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Մերձավանի խճ., թիվ 10 093 478882	Sargsyan8@mail.ru
«ԱՐՄ ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ	ք. Երևան, Կոմիտաս 8շ., բն.59 041 091155	armrusalko@mail.ru
«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 112 099 245557, 096 301080	rafojakh@gmail.com

«ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ	ք. Երևան, Մալաթյա-Սեբաստիա, Օգանովի փ., շ. 78/14 041 210020	tender-consult1@yandex.ru
Հայ-գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ	ք. Երևան, Դավթաշեն 4թ. «Գ» մասնաշենք 010 365092, 010 365792, 091 406301	arazen@arazen.am, arazen@mail.ru
«Լոկատոր» ՓԲԸ	ք. Երևան, Ադոնցի 8, 169 010 285828	tender@locator.am
«ՍԼԱԲ» ՍՊԸ	ք. Երևան, Ա. Հովհաննիսյան 6, բն. 17 091 416713	unilab.am@rambler.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 Գնման գին – 17 340 000 (ներառյալ ԱԱՀ) Մակարդակի չափման սարքեր - 30 հատ				
1	Հայ-գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ	6 000 000	1 200 000	7 200 000
	«ՍԼԱԲ» ՍՊԸ	9 382 500	1 876 500	11 259 000
2	«ԱՐՄ ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ	9 750 000	1 950 000	11 700 000
3	«ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ	11 700 000	2 340 000	14 040 000
4	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ	12 500 000	2 500 000	15 000 000
5	«Պարագիծ» ՍՊԸ	16 500 000	-	16 500 000
Չափաբաժին 2 Գնման գին – 2 730 000 (ներառյալ ԱԱՀ) Հոսքաչափեր /կցաշուրթավոր/- 7 հատ տրամաչափը 100 մմ				
1	«ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ	1 610 000	322 000	1 932 000
2	«Պարագիծ» ՍՊԸ	1 680 000	-	1 680 000
3	«ՍԼԱԲ» ՍՊԸ	1 697 500	339 500	2 037 000
Չափաբաժին 3 Գնման գին – 410 000 (ներառյալ ԱԱՀ) Հոսքաչափեր /կցաշուրթավոր/- 1 հատ տրամաչափը 125 մմ				
1	«Պարագիծ» ՍՊԸ	250 000	-	250 000
2	«ՍԼԱԲ» ՍՊԸ	272 500	54 500	327 000
3	«ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ	280 000	56 000	336 000
Չափաբաժին 4 Գնման գին – 8 883 000 (ներառյալ ԱԱՀ) Հոսքաչափեր /կցաշուրթավոր/- 21 հատ տրամաչափը 150 մմ				

1	«ԱՐՄ ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ	4 625 000	925 000	5 550 000
2	«Պարագիծ» ՍՊԸ	5 250 000	-	5 250 000
3	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ	5 833 333	1 166 667	7 000 000
4	«ՍԼԱԲ» ՍՊԸ	6 142 500	1 228 500	7 371 000
5	«ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ	6 615 000	1 323 000	7 938 000
<u>Չափաբաժին 5</u> **Գնման գին – 138 000 000 (ներառյալ ԱԱՀ)** **Հոսքաչափեր - 138 հատ տրամաչափը 200-820 մմ**				
1	«ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ	48 300 000	9 660 000	57 960 000
2	«ԱՐՄ ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ	56 383 333	11 276 667	67 660 000
3	Հայ-գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ	62 445 000	12 489 000	74 934 000
4	«Արտախ» ՍՊԸ	66 500 000	13 300 000	79 800 000
5	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ	70 833 333	14 166 667	85 000 000
6	«ՍԼԱԲ» ՍՊԸ	72 450 000	14 490 000	86 940 000
7	«Լոկատոր» ՓԲԸ	104 880 000	20 976 000	125 856 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակիցների ներկայացրած հայտերի ուսումնասիրության արդյունքում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները.

Մասնակից **«ՍԼԱԲ» ՍՊԸ**-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 5-րդ չափաբաժնի համար առաջարկվող հոսքաչափի տեխնիկական անձնագրում նշված չէ ճշգրիտ աշխատանքի ջերմաստիճանային միջակայքը, որը սահմանված է հրավերի պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի տեխնիկական բնութագրով: 1-ին չափաբաժնի համար առաջարկվող մակարդակաչափի տեխնիկական անձնագրում նշված չէ հրավերի պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ով պահանջվող արևային պանելների վերաբերյալ տվյալները (մարտկոցի արևային պանելներով սնվելու կարողության մասին): Ներկայացված տեխնիկական անձնագրերը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ:

Մասնակիցներ **«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ**-ի և **«ԱՐՄ ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ**-ի հայտերով ներկայացված չեն Հավելված 1.1-ով առաջարկվող ապրանքների տեխնիկական անձնագրերը հայերեն լեզվով՝ արտադրողի կողմից կնքված կամ արտադրող կազմակերպության տեխնիկական անձնագիրը և դրա հայերեն թարգմանությունը:

Մասնակից **«Պարագիծ» ՍՊԸ**-ի հայտով ներկայացված հավելված 1-ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը վավեր չէ՝ հնարավոր չէ էլեկտրոնային համակարգում տեսնել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը:

Մասնակից **Հայ-գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ-ի** կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 1-ին չափաբաժնի համար առաջարկվող ULTRA GSM սարքի տեխնիկական անձնագրում նշված է, որ փոխակերպիչը (մոդեմը) ներկառուցված է սարքում, այն ինչ հրավերի պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի տեխնիկական բնութագրի պահանջներով նախատեսված է, որ մակարդակաչափը պետք է լինի առցանց փոխանցման հնարավորությամբ, արտաքին մոդեմով

/արտաքին մոդեմը պետք է համատեղելի լինի սարքի հետ և ապահովի տվյալների անխափան փոխանցումը սերվերին/, ջրակայուն և սարքի մարտկոցը լիցքավորող արևային պանելով: Մասնակցի կողմից առաջարկվող մակարդակաչափի տեխնիկական անձնագրում նշված չէ մակարդակաչափի արևային պանելներով աշխատելու հնարավորության և ջրակայունության մասին տեղեկատվություն:

Հանձնաժողովի որոշումը

ՁԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ **«ՍԼԱԲ» ՍՊԸ**-ին, «**Ռաֆ-Օջախ» ՍՊԸ**-ին, **«ԱՐՄ ՌՈՒՍ ԱԼԿՈ» ՍՊԸ**-ին, **«Պարագիծ» ՍՊԸ**-ին և **Հայ-գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ-ին** մինչև կասեցման ժամկետի ավարտը **(19.10.2023թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ա. Սիմոնյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Ս. Նազարյան
	_____	Ս. Ալեքսանյան
	_____	Լ. Գալֆայան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան